

«ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐԵՐ» ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ

Posted on October 4, 2015 by Keghart



Category: [Opinions](#)



Տոքթ.Սարգիս Ատամ, Գերմանիա, 4 Հոկտեմբեր 2015

Հայոց օրացոյցի Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսները մշակույթի ձեռնարկներու ամիսներն են, այս առումով Գերմանիոյ զանազան քաղաքներու մէջ տեղի կ'ունենան Թարգմանչաց տօնին նուիրուած մշակույթի հարուստ ձեռնարկներ «Հայկական Մշակույթի Օրեր» անուան տակ:



Այս ձեռնարկները Գերմանիոյ Հայ կեանքին մէջ աւանդութիւն դարձած են: Այս ծիրէն ներս կը ցուցադրուին վաւերագրական եւ պատմական լուսանկարներու երիզներ, ցուցահանդէսներ, կ'իրականան զեկոյցներ, հայկական երաժշտութեան համերգներ, բանախօսութիւններ, գրական երեկոներ եւ կը կազմակերպուին մշակութային զանազան ձեռնարկներ, որոնք հնարաւորութիւն կը ստեղծեն Հայ եւ Գերմանացի հանդիսատեսներուն , աւելի լաւ ծանօթանալ Հայ ժողովուրդի մշակույթին:

Տոքթ.Սարգիս Ատամ, Գերմանիա, 4 Հոկտեմբեր 2015

Հայոց օրացոյցի Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսները մշակույթի ձեռնարկներու ամիսներն են, այս առումով Գերմանիոյ զանազան քաղաքներու մէջ տեղի կ'ունենան Թարգմանչաց տօնին նուիրուած մշակույթի հարուստ ձեռնարկներ «Հայկական Մշակույթի Օրեր» անուան տակ:



Այս ձեռնարկները Գերմանիոյ Հայ կեանքին մէջ աւանդութիւն դարձած են: Այս ծիրէն ներս կը ցուցադրուին վաւերագրական եւ պատմական լուսանկարներու երիզներ, ցուցահանդէսներ, կ'իրականան զեկոյցներ, հայկական երաժշտութեան համերգներ, բանախօսութիւններ, գրական երեկոներ եւ կը կազմակերպուին մշակութային զանազան ձեռնարկներ, որոնք հնարաւորութիւն կը ստեղծեն Հայ եւ Գերմանացի հանդիսատեսներուն , աւելի լաւ ծանօթանալ Հայ ժողովուրդի մշակույթին:

Այս ձեռնարկներու շարքին առաջինին բացումը կատարուեցաւ 26 Սեպտեմբեր 2015-ին Պեռլինի մէջ՝ Արշակ Զալումեանի ղեկավարութեամբ «Պարի խումբի» թատերապարի ներկայացումով, «Գերման-Հայ Մշակույթի Օրեր Պեռլինի Մէջ» անունով, որ կազմակերպուած էր Պեռլինի Գերման-Հայ Մտաւորականներու Միութեան, Պեռլին Քաղաքի Մշակույթի Պետական Սենեակի, Պեռլինի Հայ Համայնքի, Պեռլինի Գերման Բողոքական Համայնքի եւ Գերմանիոյ Հայոց Առաջնորդութեան համագործակցութեամբ: Ձեռնարկներու այս շարքը պիտի տւէ մինչեւ 2 Նոյեմբեր 2015 թուականը:

1 Հոկտեմբեր 2015-ին Ֆրանքֆուրթ քաղաքի գեղարուեստի սրահին մէջ տեղի ունեցաւ [Տէնիս Ալլթի](#) Մեծ Եղեռնի ձօնուած «Նկարչական Ցուցահանդէս»ը :



19 Հոկտեմբեր - 31 Հոկտեմբեր 2015 թուականներու միջեւ հարաւային Գերմանիոյ Սթուրթկարտ քաղաքի մէջ տեղի պիտի ունենայ Պատեն-Վիւրթէնպերկ նահանգի հայ համայնքի կողմէ կազմակերպուած 5-րդ աւանդական «Հայկական Մշակույթի Օրեր Սթուրթկարտի Մէջ» անուան

տակ ձեռնարկներու շարքը, որ 19 Հոկտեմբերին պիտի բացուի Փրօֆ. Սիիրան Տապաղի բանախօսութիւնով եւ Արտակ Կիրակոսեանի, Իսապէլ Մելքոնեանի, Հրայր Աճեմեանի երաժշտութեամբ:

23 Հոկտեմբեր- 20 Նոյեմբեր 2015 թուականներու միջեւ Քէօլն քաղաքի մէջ տեղի պիտի ունենայ Գերմանիոյ Հայոց Առաջնորդութեան կազմակերպած 12-աւանդական «Հայկական Մշակոյթի Օրեր Քէօլնի Մէջ» անունով ձեռնարկներու շարքը, որ պիտի բացուի 23 Հոկտեմբերին հանրածանօթ դաշնակահարուհի Մարինա Շիրինեանի դասական երաժշտութեան դաշնամուրային համերգով:

25 Հոկտեմբերին Քէօլնի մէջ տեղի պիտի ունենայ Գերմանիոյ Գործատերերու Միութեան կազմակերպած «Հայաստանի Պարի, Երգի Պետական Համոյթի» ներկայացումը:

Click on any picture to start the slide show of flyers

